ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 18 հունվար 2022թ.

Նիստին մասնակցում էին տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, հանձնաժողովի քարտուղար՝ Սարգիս Ղազարյանը, հանձնաժողովի անդամներ՝ Աննա Սահրատյանը, Վրեժ Բեգլարյանը և Սեդա Հակոբյանը:

Օրակարգում՝

1. Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 63-Ն որոշման՝ արտադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում(ՀՈԱԿ) մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնություններից օգտվելու համար Բյուրեղավան համայնքի ղեկավարին դիմած՝ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխայի ծնողից ստացված դիմումի:

Հանձնաժողովի քարտուղար Սարգիս Ղազարյանը հանձնաժողովին ներկայացրեց, որ տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնությունից օգտվելու համար ներկայացված դիմումին կից ներկայացվել են արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները: Նա հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց լրացված արտոնության տրամադրման ամփոփաթերթիկը:

Քննարկումից պարզ դարձավ, որ ներկայացված դիմումը «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնությունից օգտվելու հիմքով է.

- **«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի համար դիմել են.**

1) չորս և ավելի անչափահաս երեխաների ծնողներ

1. Ծաղիկ Հունանյանը (Միլենա և Ռեբեկա Վենյամինովաների ծնողը), Բյուրեղավան Սարալանջ թաղ, 2 շարք 19 տուն:

2. Նունե Հարութունյանը (Սուրեն, Գարիկ և Դավիթ Ռոստոմյանների ծնողը), Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենք 51 բնակարան:

Հանձնաժողովը որոշեց՝

Առաջարկություն ներկայացնել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

Միլենա և Ռեբեկա Վենյամինովաների, Սուրեն, Գարիկ և Դավիթ Ռոստոմյանների վերաբերյալ «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ում մատուցված ծառայություններից օգտվելու համար փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնություն կիրառելու որոշում կայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Վարդևանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Ղազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սահրատյան

_____ Վ. Բեգլարյան

_____ Ս. Հակոբյան